Արձանագրություն 3

ՀՀՄՆԳՀԱՇՁԲ-19/58 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28.10.19թ. ժ.10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հրանտ Հովսեփյան/գնահատող/

Ստեփան Ղազարյան/գնահատող/

Սերոբ Գևորգյան /բացող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին

(Կ.Սիմոնյան)

1.1 «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխնությունների մասին

(Կ.Սիմոնյան)

2.1 «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

2.1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, սակայն չի բավարարում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին, համաձայն որի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

2.1.2 Ներկայացված 03.06.2019թ. ՀՀ քաղաքացի Դավիթ Զարգարյանի հետ կնքված

վերանորոգման աշխատանքների կատարման պայմանագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ դրա շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Ընդ որում վերոնշյալ պայմանագիրը չի կարող գնահատվել որպես նմանատիպ, քանի որ իրականացված աշխատանքները կատարված չեն հրավերով պահանջվող լիցենզիայի շրջանակներում՝ հաշվի առնելով, որ մասնակցին լիցենզիան տրվել է 2019թ. հուլիսի 29-ին:

2.1.3 Ներկայացված Հավելված 3.1-ը լրացված է թերի՝ բացակայում են տեխնիկական միջոցների տարեթվերը, բացառությամբ ինքնաթափ մեքենայի: Բացակայում են բետոնախառնիչ սարքի, շաղախի ներարկիչ սարքի և շարժական էլեկտրասնուցող սարքի տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ սեփականությունը կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի պատճենները:

2.1.4 Ներկայացված Հավելված 3.2-ում հիմնական աշխատակազմում ներառված

- Դավիթ Դավթյանի, Էդիկ Ստեփանյանի և Կառլեն Զպանյանի գործունեության ոլորտը, կատարված աշխատանքը և աշխատանքային փորձի ժամանակահատվածը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:
- Հայկ Ղևոնդյանի գործունեության ոլորտը և կատարված աշխատանքը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

2.1.5 Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների կողմից տրված գրավոր համաձայնությունները արտատպված (սկանավորված) չեն բնօրինակից:

3. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ս/թ նոյեմբերի 1-ին, ժամը՝ 12:00 -ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Կ. Սիմոնյան /նախագահ/

Հ. Հովսեփյան

Ս. Ղազարյան

Ա. Ստեփանյան

Ս. Գևորգյան

Ա. Սիմոնյան /քարտուղար/

Արձանագրություն 4

ՀՀՄՆԳՀԱՇՁԲ-19/58 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01.11.2019թ.

ժ.12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Ստեփան Ղազարյան /գնահատող/

Սերոբ Գևորգյան /բացող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

(Կ.Սիմոնյան)

1.1 «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ն արձանագրված անհամապատասխանությունները շտկել է մասնակի:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ -ի հայտը գնահատել անբավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատման արդյունքների մասին

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 կետով ընդունված որոշումը՝ մերժել «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ -ի հայտը:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ի տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը և 48-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև սույն ածանագրության 2.1 կետով ընդունված որոշումը առաջարկել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<Շինարար-97>> ՍՊԸ-ին, ներկայացնելու հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե վերջինիս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և ''Ֆինանսական միջոցներ'' որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացումից հետո՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, ժամը 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Կ.Սիմոնյան /նախագահ/

_____ Հ.Հովսեփյան

_____ Ս.Ղազարյան

_____ Ա.Ստեփանյան

_____ Ս.Գևորգյան

_____ Ա. Սիմոնյան /քարտուղար/